

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաջօրէից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խւրաքանչիւր շաբաթ 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անմիջապէս գրութիւն.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Հայոց ներկայացումը. Անբեր-
րիութիւնից ձեւաւորման օգտին. Նամակ Շու-
շուկ. Նամակ Գանձակից. Նամակ Խմբագրու-
թեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—Հեռագրութիւններ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱՆՄԻԹԱՐ ԴՐՈՒԹԻՒՆ

Յոյց տուէր Կովկասում մի հայ, որ
զբաղված լինէր Կովկասի բնութեան ու-
սումնասիրութեամբ: Յոյց տուէր մէկին,
որ մասնագիտապէս ժողովում էր զսաս-
կարգում լինէր Կովկասի բոլորը, որ ու-
սումնասիրում լինէր Կովկասի սահմաննե-
րում գտնվող կենդանական աշխարհը, որ
հետազոտում լինէր Կովկասի հողը և նրա
կազմութիւնը, որ հետաքրքրվելիս լինէր
Կովկասի օդերևութաբանութեան առանձ-
նայատկութիւններով:

Եթէ դիմենք Կովկասի մէջ ապրող ազ-
գութիւնների ուսումնասիրութեան, մենք
կը նկատենք, որ այդտեղ էլ հայ մարդը
շատ քիչ գործ է առաջացրել կամ բոլոր-
ովին ոչինչ է արել: Յոյց տուէր մէկին,
որ լուրջ կերպով նուիրած լինէր իրան
վրացիների, թուրքերի, քրդերի, ուղի-
ների, Իսպանական լեռնականների և ու-
րիշ ազգաբանական տարրերի ուսումնասի-
րութեան: Կովկասեան լեզուները մինչև
այժմ չեն դարձել հայ գիտնականի ու-
սումնասիրութեան նիւթ:

Վերցնենք վերջապէս հէնց նոյն իսկ
հայերի կենքերը: Մենք ոչինչ չենք արել
նոյն իսկ այն ժողովրդի և ազգի ուսում-
նասիրութեան գործում, որին մենք պատ-
կանում ենք: Մեզ համար անյայտ են մեր
ժողովրդի տնտեսական և առտնին կեան-
քի պայմանները և մենք օրից օր աւելի
ու աւելի զգում ենք մեր այդ տգիտու-
թիւնից առաջացած անյարմարութիւնը:

Չունենք ուսումնասիրողներ, չունենք
մարդիկ, որոնց հետաքրքրէին մեր երկիրը,
մեր բնութիւնը, նրա առանձնայատկու-
թիւնները, մեր ազգագրական տարրերը և
նրանց կենցաղավարութիւնը: Մեր ինտե-
լիգենտը չունի լայն մտաւոր և բարոյա-
կան շահեր: Մեր ուսանողութիւնը, մրտ-
նելով կեանքի մէջ, որոնում է այնպիսի
պաշտօններ, որոնք ապահովէին միայն
նրա ֆիզիքական գոյութիւնը, որոնք
տալին նրան կեանքի սովորական վայելե-
րներ, ստեղծէին նրա շուրջը կոմֆօրտ և
ձոխութիւն:

Իսկ գիտնական հետաքրքրութիւնը, մը-
տաւոր շահերը, բարոյական տնայնջենքը
օգն են ցնդում, դառնալով պատանկու-
թեան քաղցր երազներ, որոնք վիճակած
է գեր խաղաղ իրական կեանքի մէջ:

Մեզ սպանց մեր երիտասարդութեան
այդ չափազանց գործնական, նեղ կարիե-
րիստական ուղղութիւնը: Ժամանակ է,
որ ինտելիգենտ մարդը սկսէ ինքը յարգել
իր մէջ մտաւոր մշակում և այդպիսով նը-
պաստէ մտաւոր և բարոյական հետաքրք-
րութեան տարածմանը մեր ազգաբնակու-
թեան մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ինչպէս յայտնել ենք, այս տարի Թիֆլի-
սում քաղաքային ձայնաւորների ընտրութիւն-
ներ կը կայանան: Սա մի երեւոյթ է, որ կա-
րեւոր նշանակութիւն է ստացել վերջին տա-
րիների ընթացքում: Կարեւոր ենք անուանում
այդ երեւոյթը ոչ թէ այն պատճառով, որ
Թիֆլիսի դուռնան կանգնած է իր կոչման

բարձրութեան վրա եւ կարող է Կովկասի հա-
մար քաղաքակրթական դեր կատարել.—Ո՛չ,
Թիֆլիսի փոքր ու քաղաքային փողոցները,
աղօտ լուսաւորութիւնը եւ առհասարակ քա-
ղաքային անբարեկարգութիւններն մի երկար
շարք չափ լաւ ցոյց են տալիս Թիֆլիսում ազ-
րողին, թէ որպիսի մեծ անկարողութիւն է
տիրում Երեւանեան հրապարակում բարձրա-
ցած քաղաքային տան մէջ: Մի տիպար կարե-
ւորութիւն Թիֆլիսի ընտրութիւնները ստացել
են այն պատճառով, որ վերջին տարիներս նը-
րանք պատում են ազգայնական հարցի շուր-
ջը: Շատ լաւ յայտնի է ամեն մէկին, թէ վեր-
ջերումս այնքան բազմապատկառ նշանակու-
թեան զգալարութիւններ, թշնամական արշակներն
ներքին ինչ առատ նիւթ էր մատակարարում
այն հանգամանքը, որ Թիֆլիսի ձայնաւորների
անազին մեծամասնութիւնը հայերից է բաղկա-
ցած: Յայտնի է թէ այս պատճառով որքան եւ
որքան շատ բան է գրվել թէ այստեղ, Կովկա-
սում, եւ թէ մայրաքաղաքը մասնուէր մէջ:
Թիֆլիսի դուռնան դարձել էր մի անուրանալի
փաստ, որ հայութիւնը Անդրկովկասում բռնել
է ռազմական դիրք միւս ազգութիւնների վե-
րաբերմամբ: Ինչպէս, ամեն տեսակ մեղա-
դրանքների ապացոյց համարվում էր Թիֆլիսի
դուռնան: Միայն թէ ընտրութիւնը այս հարցի
մէջ լաւ յայտնի է մեր ընթերցողներին: Մենք
միշտ ասում էինք, թէ քաղաքային ընտրու-
թիւնների մէջ չէ կարող տեղի ունենալ ազ-
գայնական տնայնջենք. եւ իբրեւ ապացոյց
միշտ չէինք ասել այն հանգամանքը, որ
Թիֆլիսի ձայնաւորների մեծ մասը հայ է իսկ
անուրանալի, որ այդ մարդիկ նոյնքան հայ են,
որքան վրացի կամ ուրա: Մեր դուռնային
պէտք է նայել ոչ իբրեւ մի տեղի, ուր մի
յայտնի ազգութեան ներկայացուցիչներ են
խմբված, այլ իբրեւ բուրժուական մի հիմ-
նարկութեան, որին ծառայողները չեն կարող
ի նկատի ունենալ ուրիշ որ եւ է չափ, բացի
իրանց անձնականից: Բուրժուա դասակարգը
մի եւ նոյն է ամեն տեղ, եւ հաւաքաբար հա-
մար ոչ մի օգուտ, ոչ մի թեթեւութիւն չը
կայ, որ Թիֆլիսի դուռնային բազմած են Սօ-
լոյակի կրեւորները, որոնք պետական տու-
մարների մէջ նշանակված են իբրեւ հայ-լու-
սաւորչականներ... Այսպէս է գրութիւնը.
բայց վրացի եւ ուրա չովինդները, անբարե-
խղճաբար մոռանալով այդ հասարակ իրողու-
թիւնը, կաղաքանցի, համարում են հային էլ
յանցաւոր էին համարում և վերաբերում էին
նրա կրօնական եւ ազգայնական զգացմունք-
ները, հիմնվելով նոյն Թիֆլիսի դուռնային հայ
ձայնաւորների գործերի վրա: Այժմ, երբ նոր
ձայնաւորների ընտրութիւն պիտի լինի, պէտք
է, որ մենք, հայերս, պարզ յայտնենք մեր
հայեացքը, պէտք է, վերջապէս, բացարձակ
կերպով յայտարարենք, որ իր ազգայնութեան,
իր դրամագլխի չնորհիւ ընտրութիւնների վրա
բռնացած բուրժուական նոյնքան ձեւաւար, ա-
տելի է հայի համար, որքան եւ միւս ազգու-
թիւնների համար: Մերձեւ ամառը ինչ էլ իր
վերջին համարի ներքին տեսութեան մէջ այդ-
պէս է նայում հարցին: Ահա ինչ է ասում ամ-
սաղիւրը.

Խորհրդարանը կառավարում է քաղաքի
կայքերի եւ դրամագլուխները, հոգ է տա-
նում քաղաքի արտաքին բարեկարգութեան,
առողջապահական գրութեան մասին, խնա-
մում է աղքատներին, նախազգուշական մի-
ջոցներ է անում կրակի եւ դանակի պա-
տուհանների դէպքերում, ընդարձակում է
ժողովրդի կրթական միջոցները, միջնորդում
է բարձրագոյն իշխանութեան առաջ տեղա-
յին պէտքերի մասին եւ այլն: Արդ, գործու-
նեութեան այդ բոլոր ճիւղերում չէ կարելի
ցոյց տալ մի բան, որի մէջ հայկական կամ
վրացական տնայնջենք արտայայտվէր: Մեր
առաջ զբաղված են միմիայն ընդհանուր քա-
ղաքային գործեր եւ առողջ խելքը պէտք է
թելադրէր ընտրել քաղաքային գործերի հա-
մար այնպիսի ղեկավարներ, որոնք եռան-
դոտ են, չիտակ են ընդունակ, բնաւ ուշք չը
զարձնելով, թէ ընտրվող թեթեւութեան ե-
րեւոյթները հայոց եկեղեցին է յաճախում (չէ
որ հայ բուրժուա-ինտելիգենտներն մեծա-

մասնութեան «ազգային» յատկանիշը միայն
դրա մէջ է արտայայտվում...):

Միայն անաչառութեան պարտք կատարած
կը լինենք յայտնելով, որ Թիֆլիսի քաղա-
քային խորհրդարանը ոչ միայն զուտ հայկա-
կան որ եւ է տնայնջենք չէ ցոյց տուել, այլ
եւ գործել է հէնց այն ուղղութեամբ, որ
ընտրել է Ռուսաստանի բոլոր քաղաքային
ինքնավարութիւններին: Անշուշտ, նախ եւ
առաջ իշխող դասակարգը իր բնույթ թեթե-
ւացնելով, իր յարմարութիւնները բազմա-
նկու մասին է մտածում եւ ապա նաեւ չը-
քաւոր դասակարգի պահանջներն է ի նկատի
առնում: Այդ բանում զուտ հայկական գիծ
չը կայ. Բուրժուական նոյնն է, ինչ որ մի
Օրիօնում, Թիֆլիսում նոյնն է, ինչ Պետեր-
բուրգում: Համամարդկային գիծ է, որ
կուշտ քաղաքային դժուար է հասկանում,
եւ այդ երեւոյթի մէջ ինչ-որ ազգային դա-
ւեր որոնել նշանակում է Դոն-Գիշտի նման
«ազգայնացի» դէմ կուրել ինքն, օրինակ,
վրացին, որի ձեռքում է մեր երկրի մար-
գանցի արգիւնաբերութիւնը, իր բանուոր-
ների համար աւելի իդէալական կարգեր ըս-
տեղծած լինէր, քան հայ նաւթագործը—մենք
գուցէ, համոզվէինք, որ վրացի բուրժուայի
մէջ աւելի է զարգացած արտադրողական
գիծը, քան նրա հայ եղբայրակիցը. բայց չէ
որ իրականութիւնը մեզ իրաւունք չէ տա-
լիս մի այդպիսի եզրակացութիւն անելու:
Ռուսի ժամանակ է արեւի յանձնել ազգա-
յին անհատականութեան արտադրված հին
գրօշակները եւ պարզել մի նոր գրօշակ, ո-
րի վրա բացայայտ գրված լինեն քաղաքա-
յին գործերը եւ անասութիւնը վրեժիւ
ծրագիրն են: Այն ժամանակ այդ ծրագիր-
ների շուրջը կը խմբվեն մարդիկ, համա-
ձայն իրանց ձգտումներին եւ աշխարհայե-
ցողութիւններին եւ ոչ ազգականական-բարե-
կամական կապերին... Իսկապէս մենք մին-
չեւ այժմ «հայկական» կամ «վրացական»
ծրագիրներ էլ չենք տեսել, որովհետեւ չեն
էլ կարող լինել այդպիսի ծրագիրներ քաղա-
քային գործերում. բայց մենք միեւնոյն ժա-
մանակ չենք էլ տեսել իսկական կուսակ-
ցութիւններ, տարբեր ծրագիրներով ու
աշխարհայեցողութիւններով, այլ աւելի շուտ
եղել են լոկ ազգայնական դիմակով ծածկված
բուրժուական առտոժաններ, ստոր միա-
փառութիւն, խմբակային համակրութիւններ
ու հակակրութիւններ:

Շատ ցանկալի է, որ այսպիսի հայեացքներ
որքան կարելի է շատ տարածվեն մեր ժողո-
վրդի մէջ: Ժամանակ է, որ մենք դուրս
գանք երեւոյթական մոլորութիւնների շրջանից
եւ սովորենք լուրջ նայել հարցերին, գործել
իրենց չափահաս, հաստատացած մարդիկ, ո-
րոնք գիտեն ծառայել ուղղութիւններին, որոնք
դաւանանքներն են ոչ թէ փոսած նախապա-
շարմունքներին...

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Կիրակի, ապրիլի 22-ին, երիտասարդ դերա-
սան Ն. Յովհաննիսեան փորձեց իր ոյքը Համ-
լետում:

Սկսնակ դերասանի համար այդպիսի դերե-
րում դուրս գալն այնպիսի յանդգնութիւն է,
որ կարող է արգարացնել միայն աշողութիւնը:

Պ. Ն. Յովհաննիսեան աշողութիւն չունեցաւ:
Խօսքս արտաքին աշողութեան մասին չէ,
որովհետեւ պ. Յովհաննիսեանին բաւական
չափ, մինչեւ անգամ չափազանց շատ ծափա-
հարցելիս Սկսեցին ծափահարել նոյն իսկ թա-
ղաքի արդիւթիւն տեսարանից յետոյ, երբ ամբողջ
տեսարանի ընթացքում մինչեւ անգամ երրորդ
կարգից ոչ մի բառ չէր լսվում պ. Յովհաննի-
սեանի արտասանածից: Այդ բաւական է այդ
օրվայ ծափահարութիւնների արժէքը մասաւ
որոշելու համար: Մասամբ եմ ասում, որով-
հետեւ ծափահարողներն մէջ անշուշտ կային
այնպիսիները, որոնք ծափահարում էին պ.
Յովհաննիսեանին նրա պարզ արտասանու-
թեան համար: Իսկ, պէտք է խոստովանել, որ
այն դէպքերում, երբ երիտասարդ դերասանը
ցած ձայնով չէր խօսում, եմ ասում, որով-
հետեւ ծափահարողներն մէջ անշուշտ կային
այնպիսիները, որոնք դերասաններից նոյն իսկ
տաղանդաւորները յաճախ ծամծամ կամ
կուլ են տալիս խօսքերը, այդ այնպիսի արժա-
նաւորութիւն է, որ պէտք է մասնացոյց անել:

Բայց այն էլ պէտք է ասենք, որ մենք այդ
երեւոյթ բացի այդ արժանաւորութիւնից ոչ մի
ուրիշ աչքի ընկնող արժանաւորութիւն չը նը-
կատենք: պ. Յովհաննիսեանի մէջ, որ, սա-
կան, ինչպէս լսել ենք, շատ լաւ վկայականով
է աւարտել Մօսկվայի դրամատիկական դպրո-
ցը: Գուցէ այդ բացասարկում է նրանով, որ
Համլետի դերը շատ անհամապատասխան է ե-
րիտասարդ դերասանի ընդունակութիւններին
եւ ընաւորութեանը: Մենք շատ ուրախ կը լի-
նէինք, եթէ այդ միայն դրանով բացատրվէր
եւ ապագան ցոյց տար, որ պ. Յովհաննիսեան
կարող է օգտակար ոյք լինել հայ բեմի հա-
մար ուրիշ դերերում:

Այդ անհաւանական չէ, որովհետեւ «Համլե-
տ» այն տեղերում, ուր պէտք էր արտայայ-
տել զօրեղ զգացմունքներ, պ. Յովհաննիսեան
այնքան թոյլ չէր խաղում, որքան պարզեցնելով
տեղերում, ուր երիտասարդ դերասանը լուրջ
դպրոց անցածի համար անհերքելի կերպով աշ-
խատում էր լրացնել զգացմունքի պակասու-
թիւնը ձեռքերի, ամբողջ մարմնի եւ մանա-
ւանդ դիմի անգեղարուեստական շարժումնե-
րով: Ի դէպ ասել, անգեղարուեստական էր եւ
նոյնքան չափ լեզուները եւ չորեքթիւն անելը
չորած ժամանակ:

Մի, այն էլ անաշուղ ներկայացման հիման
վրա դժուար է գուշակութիւններ անել, բայց
մեզ թւում է, որ պ. Յովհաննիսեան կարող է
թերեւս աշողութիւն ունենալ բեզմենիների
դերում: S. Թ.

ԱՆԲԵՐՐԻՈՒԹԻՒՆԻՅՈՒՆ ՎՆԱՍՎԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք հետեւեալ նոր նուիրատուութիւն-
ները.

Ջաքաթ ալից—Մանիա Աղամալեանից
6 ռ. 50 կոպ.: Նուիրատուներն են. տիկիններ
Մ. Աղամալեան 2 ռ., Համասիւրեւ Մելիք-
Մատուրեանց 1 ռ., Լ. Շալապալեանց 1 ռ.,
Թ. Միքայէլեանց 1 ռ., Օ. Մ. Աւետիսեանց 50
կ., Մ. Մատուրեանց 1 ռ.:

Աբիսկայեա ստանիցայից.—1) Լե-
ւոն Մերգելովից 8 ռ. 40 կոպ., հաւաքված մի
խումբ երիտասարդներից. 2) Աւետիս Զատի-
կեանց 50 ռուբլի:

Կրասնօդոսկից—Արշալուր քահ. Վար-
դանեանց 20 ռ. 50 կոպ.: Նուիրատուներն են
տիկիններ Ա. Դաւթեանց, Մ. Արթուրեանց, Կ.
Խաչատրեանց, Ե. Յարութեանց, Ե. Վար-
դանեանց, Կ. Գեղարեանց, օր. Ջ. Հայրապե-
տեանց 1-ական ռուբլի: Ա. Գեղարեանց, Ն.
Դիրքեանց 3-ական ռուբլի: Մ. Թումանեանց
1 ռ. 70 կ., Մ. Գիւրապարեանց 1 ռ. 80 կ.:
Տ.Տ. Կ. Ամիրխանեանց, Հ. Բաղդիսեանց, Ա.
Նազարեանց, Ն. Թումանեանց, Ա. Այվա-
զեանց, Մ. Լալաբեանց, Ջ. Սուլէյմա-
նեանց, Մանուկ Մ. Տէր-Գաբրիէլեանց 50-ական
կոպէկ:

Մօսկվայից—մի խումբ ուսանողների մի-
ջոցով ժողոված 195 ռուբլի: Նուիրատուներն
են տիկ. Ե. Պապովանց 20 ռ., տ. Վ. Բանա-
նեանց, Ս. Լիւսնովեանց, Մ. Շորչոբեանց, Բա-
լանթարեանց 10-ական ռուբլի: Տէր-
Մկրտչեանց 15 ռ.: Խ. Բանանեանց, Մ. Բա-
նանեանց, Գ. Կազմիկեանց, Շահինեանց, Լա-
զարեանց, Ս. Շ. Յակոբեանց, Մ. Պապովեանց,
Բ. Արզումանեանց, Ն. Խալիպարեանց, Ջ.
Սարգսեանց, Ա. Մանուկեանց, Ա. Գեղարեանց,
Ռ. Գեղարեանց, Ս. Դուրդաբեանց, Ա. Բէգ-
լարեանց 5-ական ռուբլի: Խալիպարեանց 6 ռ.,
Սուրենեանց 4 ռ.: Ալմաբէգեանց, Ունի,
Ն. Դիւլապեանց, Ս. Յակոբեանց, Ե. Տէր-
Յարութեանց, Մ. Անախատեանց, (Արաք),
Ա. Սարգսեանց, Ա. Ոսկանեանց, Պ. Գեղար-
եանց 3-ական ռուբլի: Ս. Մկրտչեանց, Բ.
Գաւապարեանց, Ս. Ներսէսեանց, Ի. զրաշեանց
2-ական ռուբլի: Ունի, Յովհաննեանց, Մելիք-
Բէգլարեանց 1-ական ռուբլի: Հանված է կառ-
քերի (5 խումբ ուսանողներ) եւ փողը ուղար-
կելու ծախս 14 ռուբլի:

Ընդամենը 280 ռուբլի 40 կոպէկ իսկ նախ-

կին գումարները հետ 416 ր. 36 կ.: Մենք յանձնեցինք Թիֆլիսի գլխավոր կոմիտեին 4000 րուբլի: Մեզ մօտ մնում է 162 րուբլի 36 կօպ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Ապրիլի 19-ին

Վեց ամիս է՝ մենք ընտրութիւններով ենք զբաղված... Վաղն էլ, ամիս 2)-ին, նշանակված է գումարի դահլիճում ընտրութիւնների աւագագոյնը, անդրանիկը:

Վաղը, եթէ միայն Տէրը օգնութեան կը հասնի մեզ, Շուշին կունենայ նոր քաղաքացուիս: Սակայն մի ներքին նախազգացմունք թուլացնում է մեզ եւ գուշակում է մի շատ անախորժ հիասթափութիւն:

Երկու կանգնողատ, մէկը միւսից արժանաւոր, որոնց վրա դրել էինք մեր ցանկութիւնները եւ մեր յոյսը, հրաժարվում են քաղաքագլխի պաշտօնից: Մէկին, իբրեւ բժշկի, մասամբ ներելի է եւ մենք արդարացում ենք նրան: Մարդը չէ կարողանում իր խցի հետ կօպրօմիս արքել եւ միաժամանակ Վերկու տէրաւնց ծառայել, որ շատերի համար մի այնքան էլ դժուար բան չէ մեզ մօտ՝ Շուշու: Բայց ինչ մտածենք միւսի վերաբերութեամբ:

Չորս տարի առաջ յօժար էր նա, միաձայն ընտրվեց: Սակայն ընտրութիւնը անակնկալ եւ անկարգ պատճառով քակվեց: Վերջերս նորէն ասպարէզ եկաւ նա, իրանով զբաղեցրեց, իր վրա տաքացրեց ժողովրդին, պատրաստակաւ մութիւն յայտնեց յանձն առնել քաղաքի լուծը եւ... եւ հենց մի օր միացած ընտրութիւններին՝ թողեց անպարէզը ու փախաւ:

Մենք վստահ ենք, որ պարոնը իր խօսքին, իր ուխտին չի դաւաճանի եւ եթէ վաղը չը գնէ էլ իր արկը, նորից ագնիւ խօսք կը տա մեզ իր մասնաւոր եւ ծառայական գործերը մինչեւ մի ամիս կանոնաւորելուց՝ ընդունել քաղաքագլխի միակ եւ ընդհանուրից համակրված կանգնողութիւնը:

Իսկ մենք կարող ենք վաղվայ ընտրութիւնը մի ամսով յետաձգել եւ սպասել:

Եթէ ուշադրութեամբ քննենք մեր գիւղացիների ուսերն ու մէջքը, եթէ հետազօտենք մեր տնային կենդանիները, մասնաւոր ինչ եւ խոնարհ էջերի կային, մենք արտասովոր պիտի նկատենք, որ խոնարհ, բեգբեր, ժամանակից սկսած, Նաղար-Աղայի գլխով անցած կարգերը ողջ-առողջ, անփորձ հասել են մեզ եւ պահպանվում են շուրջը եւ անխախտ:

Անցեալ օրը մի խեղճ մարդ, մի թշուառ արհեստաւոր, որի միակ սեղըրը այն էր, որ հիւանդ էր եւ հանդարտ, լուռ-մուռ չըլլում էր փողոցներում առանց մէկի հետ մի բան խօսելու, առանց մի երեխայի անդամ ամենափոքր վնաս տալու, այդ խեղճ մարդը զո՞ գնաց երանգաւոր գործողի անողորմ, գաղանային հարուածներին:

Թփխանայի երեսից արելով, դէն քշելով էջերին, ջորիններին, նա դէն քշեց եւ թշուառ հիւանդ մարդուն եւ օրը կէսօրին, հարիւրաւոր աչքերի առաջ, ծառի վրա կապելով այնքան ծեծեց նրան, այնպիսի եւ այնչափ հարուածներ տուեց գլխին, որ անբարձր հիւանդը հետեւեալ առաւօտ աւանդեց բազմաշարքար հոգին, դարձանալով մարդկային անգթութեան եւ արիւնախումբ գաղանայութեան վրա:

Բանտարկված է հերոս—գործողը. քննութիւնը շարունակվում է:

Դատաւարտեցին կախողանի, —ինչ օգուտ...

Մինչեւ էջերը կանգնելու տեղ չունենան, մինչեւ անտէր հիւանդները չը պատուարվեն, մինչեւ գործողիների սանձը չը քայլի, քանի մեր քաղաքը, գլուխ ունենալով հանդերձ, անգլուխ կը մնայ, մենք վերեւ յիշած դո՞հի նմաններին դեռ շատ երկար ժամանակ պիտի անտես պիտի լինենք...

Սերմացան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Ապրիլի 21-ին

Բանանց գիւղացի, արհեստով հիւան Ալեքսան Միրզայանցը, դաշոյնի մի քանի հարուածով երէկ, ամիս 20-ին, վերջ դրեց իր երիտասարդ կնոջ կեանքին: Սպանութիւնը ունի իր պատմութիւնը, ուստի աւելորդ չեմ համարում մի քանի մանրամասնութիւններ առաջ բերել: Մի տարի առաջ Միրզայանցը իր ընտանիքով (երկու փոքր աղայ-երեխայ, մէկը 9 տարեկան, միւսը 6 տարեկան) տեղափոխվում է Բագու, գործ որոնելու համար: Նա բնակարան է վարձում մի թուրքի բազում, ուր ոչ մի ուրիշ հայ չէր ապրում: Տանտէր թուրքին ա-

ջողվում է երիտասարդ ու չափազանց սիրուն կնոջ հետ սիրային յարաբերութիւն հաստատել: Անցնում է մի քանի ամիս, ամուսինը յանկարծ ստանում է վնասակար հիւանդութիւն: Նա չէ ուզում կասկածել կնոջ վրա, դիմում է սրա նրա խորհրդին, եւ վերջը ընկերները նրան հաւատացնում են, որ առանց անհապա կնոջ հետ յարաբերութիւն ունենալու էլ, մարդ կարող է վարակվել սուսանակով: Իսկ կնոջ միջոց նախատեսելի է լինում, որ իրան հիւանդացնողն իր ամուսինն է:

Պատահմամբ մարդը իմանում է, որ տանտէր պարսիկը սիրային յարաբերութեան մէջ է գտնվում իր կնոջ հետ: Նա որոշում է այդ տեղից դուրս գալ եւ վարձել մի հայի յարմար տուն կամ թուրքի տուն, ուր գտնէ հարեւանները հայեր լինեն: Այդպէս էլ անում է— տեղափոխվում է մի թուրքի տնից մի ուրիշ թուրքի բազ, ուր հարեւանները հայեր են լինում: Այստեղ էլ նախկին պարսիկը շարունակում է այցելել նրա կնոջը: Բայց որովհետեւ հարեւանները հայեր են լինում եւ այդ բանը վերջ ի վերջոյ պիտի պարզվէր, խորամանկ թուրքն իրան հիւանդը բոլոր հայերին եւ ուսանողներին մի-մի բանով կաշառում է, որ ամուսնուն չը յայտնեն: Այստեղ էլ երկար չէ տեսնում դրանց յարաբերութիւնը. ամուսինը հարեւաններից իմանում է, որ հիւանդ էլ նրա կնոջը, մի թուրքի տեղ, երկուսի հետ է սկսել յարաբերութիւն ունենալը:

Այս խայտառակութիւնից ազատվելու համար ամուսինը փորձում է կնոջը ուղարկել Ասխաբադ՝ իր քնուտ մօտ: Զանապարհից կինը մի այլ շոգենաւով վերադառնում գալիս է, ուղղակի թուրքի տանը տարուս: Ամուսինը երկար չարգելադրեց յետո՞ ոչ մի հնար չէ գտնում թուրքի տանից դուրս բերելու կնոջը: Թուրքերը սպառնում են, որ ձեռք քաշի իրանցից, հակառակ դէպքում վերջ կը դրվայ: Ալեքսանը վերադառնում է Գանձակ, դիմում հոգեւոր իշխանութեան: Վերջում գրում է մարմնաւոր իշխանութեան, որի ձեռք առած խիստ միջոցների շնորհիւ կարելի է լինում հսկողութեան տակ կնոջը վերադարձնել: Գանձակ իր եղբոր մօտ: Այստեղի մի քանի ազգեցիկ անձինք խրատում են կնոջը, որ ձեռք վերցնէ այդ առաջին ճանապարհից, սակայն կինը պնդում է, որ իրան ներկայացնեն հոգեւոր իշխանութեան, որի միջոցով ինքը պիտի արձակվան թուրքի եւ անցադիր ստանայ, Բագու վերադառնալու համար: Իսկ այդ փոքրիկներին ինչ եւ անելու, հարցնում է ներկայ եղողներից մէկը: —Դրանք իմա չեն, պատասխանում կինը: Վերջը կինը սկսեց արտասովոր Արտաւովում են նաեւ ներկայ եղողները, երբ կինը նախ մեծ երեխային իր մօտ կանչեց, ապա փոքրին, կօնֆէտներ տալու համար: Մինչեւ այդ՝ երեխաներից ոչ մէկը չէր համարձակվում թրքուհու հազուադէպ մօրը մօտենալու:

Մի կողմից խայտառակելով, միւս կողմից յորդոր կարդալով, կինը համաձայնվում է մարդու մօտ մնալու: Երկու ամիսից մօտ է, որ նրանք ապրում էին միասին, առանց որ եւ է տարաձայնութիւն ունենալու:

Բայց յանկարծ երէկ, ամիս 20-ին, հարեւաններին իրենց Ալեքսանին յայտնում է, որ իբրեւ թէ կինը իրանից տղամարդու չորեր է ուղիւ, որի համար քանի բուլբլ վարձատրութիւն է խոստացել, որպէս զի տղամարդու հազուադէպ գնալ Բագու, թուրքի մօտից իր տան իրերը բերելու համար: Այս տեղեկութիւնը լսելուց յետոյ, ամուսնու արիւնը գլուխ է տալիս: Նա մտնում է տուն ու զանակի մի քանի հարուածներով վերջ է տալիս կնոջ կեանքին եւ դանակը ձեռքին դուրս գալիս մօտակայ լրի արիւնով լուսանում ու անհետանում: Միւս օրը ինքը անձամբ ներկայանում է ոստիկանատուն: Յանցաւորը բանտարկված է:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալեքսանդրօպոլ, ապրիլի 18-ին

«Մշակ» 36-րդ համարում Ալեքսանդրօպոլից իմ գրած լուրը մեր քաղաքացի Յովհաննէս Իրաքեանցի վախճանութեան գործի մասին, որ քննվում էր քաղաքի քննիչի մօտ, պ. Յ. Իրաքեանց հերքեց «Մշակ» 41 համարում եւ բացարձակ ուրացաւ ինչպէս գործի գոյութիւնը: Այժմ ուղարկում եմ ձեզ նոյն գործի վերաբերեալ ինչեւայ քննիչ Ալիքիսկու ծանուցագիրը, որից կարող էք համոզվել, որ պ. Յ. Իրաքեանց, իբրեւ, ինչպէս եւ հաղորդել էի, մեղադրված է, համաձայն օրէնքի 1707 յօդուածի, որը վերաբերում է վախճանութեան:

Միք. Սարգսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի, ապրիլի 23-ին, Թագուհի-կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդօրովնայի անուանակոթեան տօնի առիթով, ուսուցչական խորհուրդի կողմից գործողական մարմանը, Նոյն տեղի ունեցաւ հայոց եւ միւս դաւաճութիւնների տաճարներում: Երեկոյեան քաղաքը լուսավառված էր:

Երկուշաբթի, ապրիլի 23-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի մամուլի ներկայացուցիչների ժողովը: Խորհրդակցելու մասնակցի պալլիտիօն չի ներկայացրել մամուլի կողմից ցուցահանող Եսու: Ժողոված տեղեկութիւնները, կազմած յատակագրի, մասնակցողների շատութիւնը համոզեցին, որ մամուլի պալլիտիօն չինքը կարող է իրագործել առանց մեծ զոհաբերութիւն պահանջելու մասնակցներից: Պալլիտիօնում ընդարձակ տեղ կը բռնէ ընթերցարանը, ուր ցանկացողները ձրիապէս կարող են կարգալրացիներ եւ գրքեր: Մասնակցողները պէտք է իրանց ցանկութեան մասին յայտնեն մինչեւ մայիսի 15-ը: Իւրաքանչիւր քառակուսի արշինի համար պէտք է վճարել 5—10 րուբլի: Այդ պալլիտիօնի վերաբերեալ բոլոր գործերը վարելու համար ընտրվեց ութ հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որի անդամներն են՝ ի. Գ. Թուսանեան, Բեգիչեւ, Չոքիւր, Խ. Խաչատրեան, Յ. Խաչատրեան, Զարգարի, Վ. Կորգանով եւ Քալանթար:

Վ. Լուսկիվիչի վերջին դասախօսութիւնը, որ կարգադրեց շաբաթ, ապրիլի 21-ին, նուիրված էր երկրագնդի զարգացման պատմութեան եւ նրա վախճանի մասին եղած ենթադրութիւններին: Դասախօսը նկարագրեց երկրագնդի կեանքի հին շրջանները, կանգ առնելով քաղաքային շրջանի վրա եւ նկարագրելով այն ժամանակվայ բոլորից եւ կենդանիներին: Մոգական լապտերի միջոցով ցոյց արվեցին մի շարք պատկերներ, որոնք լուսաբանում էին դասախօսութեան նիւթը: Երկրագնդի վախճանի մասին առաջ բերած ենթադրութիւնները, ցոյց են տալիս, որ մարդկութիւնը անմահ չէ եւ որ ժամանակով երկրագնդի վրա անկարող կեանք: Բայց այդ դժբաղդ վախճանը դեռ շատ հեռու է մեզանից: Մեր առաջ դեռ կան շատ դարեր, որոնց ընթացքում կարող է զարգանալ եւ բարգաւաճել մարդկութիւնը: Լուսկիվիչի դասախօսութիւնը հետաքրքրական էր եւ աշուղ: Հասարակութիւնը յայտնեց իր շնորհակալութիւնը դասախօսին բուն ծափահարութիւններով:

Կիրակի, ապրիլի 22-ին, ժողովրդական հանրամատչելի թատրոնում, տեղի սիրողները, մասնակցութեամբ օր. Չալկեանի եւ Ամօի, ներկայացրին Ա. Գնունու «Վախճան» դրաման: Թատրոնը սովորականից էլ շատ լինէր եւ այս անգամ, բաղի սովորական այցելուներից, ներկայ էին եւ շատ կանայք: Այդ օրվայ խաղացողներին լաւ կատարեցին պ. Ռաֆայելեան—վաշխառուի դերը, եւ պ. Խաչատրեան—ուսանող որդու դերը: Վատ չէին օր. օր. Չալկեան, Վարսեհի եւ պ. Միրզոյեան: Կիրակի, ապրիլի 29-ին, խաղաւ են Արդիւնաւոր պաշտօն:

Վրաց դրամատիկան խմբի վարչութեան նախագահ պ. Վ. Սուլիսանովից ստացանք հետեւեալ ծանուցումը. «Ներկայ տարվայ ապրիլի վերջը լրանում է 30 տարի հայոց դրող-դրամատուրգ Գ. Ն. Սուսուկեանի «Պէպօ» պիէսը Թիֆլիսի բեմի վրա ներկայացնելու օրը: Գարեթի Սուսուկեանիցի մատուցած ծառայութիւնները վրաց բեմին նոյնքան մեծ են, որպէս եւ հայոյ բեմին, եւ նրա առաջին ծանուցիչը պիէսը, որ դրվեց վրաց բեմի վրա, «Պէպօ» կոմէդիան էր, որը ապա արդէն բեմից չէ իջել: Վրաց Դրամատիկան Ընկերութեան վարչութիւնը, ցանկանալով յաւերժացնել այդ օրը «Պէպօ» պիէսը դնելով, կազմում է յօրենքական ներկայացում, եւ հաւատացած է, որ դուք, չէք մերժի մեր ներկայութեամբ թատրոնում յայտնելու ձեռնարկութիւնները սիրելի գրողին: Ներկայացումը նշանակված է ապրիլի 29-ին, երեկոյեան 8 1/2 ժամին, վրաց Ազնուականութեան թատրոնում:

«Կաւկազ» լրագրի լսելով, այս ամառ դալու է Թիֆլիս իր խմբով յայտնի դերասանուհի Նալբարկայա (իշխանուհի Բարեատիսկայա), որը, ի միջի այլոց, ներկայացնելու է Բոստանի նոր պիէսը «Օրլենոյ» (Aiglon):

«С.-П. Вѣд.» լրագրի հաղորդում է, թէ «Научное Обозрѣніе» ամսագրի խմբագիր, փիլիսոփայութեան դոկտօր Մ. Մ. Ֆիլիպովը ներկայացրել է ժողովրդական լուսաւորութեան միջոցով վախճանի ուսուցչական դպրոցական հաստատութիւնների բարեփոխութեան մի նախագիծ, որի գլխաւոր կէտերը հետեւեալն են: 1) Ստորակարգ դպրոցները պէտք է կազմակերպվեն գէթմալօյի ուսուցիչների տիպարով, ուսուցումը նրանց մէջ պէտք է լինի ընդհանուր եւ պարտաւորական: 2) Միջնակարգ դպրոցներում պէտք է վերացնել հին լեզուները պարտաւորական դասաւանդութիւնը, թողնելով նրանց սովորելը միայն ցանկացողների կազմին եւ այն էլ միմիայն գիմնազիաների երեք բարձր դասարաններում: Նրանց փոխարէն պէտք է մտցնել նոր լեզուները ուսուցումը եւ վերականգնել բնական գիտութիւնների դասաւանդութիւնը: Անհրաժեշտ է մշակել նոր մալ կանօնագրութիւն ծնողական խմբակցութիւնների համար եւ կարգաւորել նրանց յարաբերութիւնները մանկավարժական խորհուրդների հետ: 3) Համալսարաններում պէտք է ընդունել ուսուցման եւ դասաւանդման աւագ դէմական լիակատար ազատութեան սկզբունքը: Վարչութիւնը պէտք է կազմակերպվի ներքին լիակատար ինքնավարութեան հիմունքներով: Պրիվատ-դոցէնտի պաշտօնը պէտք է պահել բարեկրթելով պրիվատ-դոցէնտների նիւթական եւ իրական վիճակը: Բարձրագոյն զբաղողը պէտք անմատչելի լինի ընդհանուր ուստիկանութեան համար: Համալսարանական ինսպեկցիան, որպէս զուտ ոստիկանական հաստատութիւն, պէտք է վերացնել: Դրա փոխանակ պէտք է վերականգնել համալսարանական դասաւանդ իր ամբողջ ծաւալով: Դասարանի նիստերին պէտք է մասնակցեն եւ ներկայացողները բոլոր կուրսերից: Ուսանողները պէտք է ստանան կուրսային կազմակերպութիւն: Անկախ սրանից՝ այն բոլոր կազմակերպութիւնները, որոնց նպատակն է ուսանողների նիւթական կամ հոգեւոր բարեկրթութիւնը, ինչպէս օրինակ, «Ժողովները», «Հայրենակցութիւնները», «Երամարկները» եւ այլն, ոչ միայն չը պէտք է հալածվեն, այլ եւ պէտք է ամեն կերպ քաջալերութիւն գտնեն: Ուսանողներից պիտի իրաւունք ընդունեն աւագ դասարանական դասարանի մասնակցող ներկայացուցիչներից, նաեւ կուրսային աւագներ՝ որպէս ներկայացուցիչներ համալսարանական եւ այլ իշխանութիւններին առաջ: Ուսանողներին իրաւունք է տրվում ժողովներ կազմելու ուսուցման պարագմունքներից ազատ ժամերում:

Վարչապալատ, որսորդական կլուբի շինութեան մէջ, բացված է մի ցուցահանդէս լեհացի նշանաւոր վիպագրող Սենկիվիչի անունով ծուցահանդէսում ժողովված են Սենկիվիչի, նրա ընտանիքի անդամների, նրա առանձնահատկաւ եւ կալուածքի պատկերներն ու նկարները, որոնց թիւը հասնում է 339-ի: Ծուցահանդէսի մի նշանաւոր մասն են կազմում Սենկիվիչի բոլոր գրուածքները թէ լեհական ճապարկ եւ թէ թարգմանութիւնները (ուսերէն, գերմաներէն, անգլիերէն, իտալերէն, սպաներէն, չեխերէն, կրօտներէն, սերբերէն եւ այլն): Այստեղ ժողովված են նոյնպէս զանազան լեզուներով գրված բազմաթիւ գրքեր եւ յօդուածներ, որոնք նուիրված են Սենկիվիչի դրական գործունէութեան քննադատութեան: Ծուցահանդէսի առարկաների մէջ են նոյնպէս այն բոլոր ուղերձները, դիպլօմները եւ ընձանքեր, որոնք մատուցված են Սենկիվիչին նրա յօրենքական օրը:

«Մշակ» այս համարում տպելով մեր թղթաւի պ. Միք. Սարգսեանցի նամակը, հարկաւոր ենք համարում յայտնել, որ յիշաւի նա ուղարկել է մեզ մի ծանուցագիր (повѣстка), որով պ. Ա. Յարութիւնեան ապրիլի 13-ին հրաւիրվում է, իբր գանգաւաւոր, Ալեքսանդրօպոլի քննիչի մօտ պ. Յովհաննէս Իրաքեանցի գործով, որը (պ. Իրաքեան) մեղադրվում է պատժական օրէնսգրքի 1707 յօդուածի համաձայն: Այդ յօդուածում ասված է հետեւեալը. «Виновные въ повтореніи преступнаго дѣянія или въ учиненіи его въ видѣ промысла, подвергаются и т. д. Իսկ այդ տեղ յիշված 1807 յօդուածում ասված է. «За ссуду капитала въ чрезмѣрній ростъ или подъ обезпеченіе чрезмѣрной неустойки и т. д.»:

Նորերս լոյս տեսաւ «Сборникъ на помощь

учащимся женщинам» (Ժողովածու յոգուտ ուսանող կանանց), որ կազմված է բազմա- պէս կին-գործերի եւ կին-նկարիչների յո- գուտներէն եւ նկարներէն: Ժողովածուն պա- րտնական է 25 կին-գործերի պատմութեանը եւ նկարներին: Բնութագրական, ժողովածուի մէջ տպված են 37 պատկերներ եւ 85 նկարներ: Առաջա- րանում, ի միջի այլոց, ասված է. «Այս ժողո- վածուն որոշ չափով պէտք է ծառայէ իբր փորձ մի ամփոփ գաղափար տալու, թէ ինչ են արել կանայք վերջին ժամանակները գրական- նութեան եւ նկարչութեան ասպարէզներում: Ժողովածուի արդիւնքով պէտք է շինվի մի հանրակայարար, որի մէջ այն ուսանող, որի արդիւնքը, որոնք զուրկ են ընտանիքից, կա- րող են ստանալ չոր ու տաք կացարան եւ անողջ սնունդ»:

Կախված էրկաթուղու շինութիւնը, «НОВОСТИ» լրագրի ասելով, կարելի է այժմ ապահովված համարել: Արտօնութիւնն այդ երկաթուղին չնկելու ստացել էին զեռ անցնող տարի իշխան ի. Գ. ձաւմալովսէ եւ կարծի երկաթուղու շինող Սիմեոնի, բայց մինչեւ այժմ նրանք չէին կարողանում գտնել գրաւատէրեր գոր- ձին ձեռնամուխ լինելու համար: Այժմ կազմ- վել է մի ընկերութիւն անգլիական գրաւա- տէրերից, որ մտցրել է պետական բանկը 30,000 ռուբլի, իբրեւ սկզբնական վճար, իսկ մնացած 1,200,000 վճարը կը յանձնվի բանկին: Երկաթուղու շինութիւնը, երկու ամսից յետոյ: Երկաթուղու շինութիւնը, որ կը սկսվի Աւստրալ կայարանից եւ կը հաս- նի մինչեւ Սալոբո, կարժենայ 12,000,000 ռուբլի: Ընկերութիւնը հէնց այսօր գումարի էլ բաց կը լինի ըստենթից: Երկաթու- ղու շինութեան աշխատանքները կը սկսվեն այս տարվայ ամառային ամիսներում:

Նովոբուխովի նաւահանգիստի շահագոր- ծութիւնը նրա բոլոր շինութիւնների հետ միասին, ինչպէս հաղորդում է «КАВКАЗ» լրագիրը, անցնում է Վազիկովսկի երկա- թուղու վարչութեան ձեռքը:

Հաղորդակցութեան ճանապարհների միջիս- տրութեան մէջ մշակվում է մի նախագիծ՝ կու- բան գետից մինչեւ Անապայի նաւահանգիստը ջրանցք շինելու նաւարկութեան համար: Այս նախագիծը կայ ունի մի այլ նախագիծ հետ, որով մտադրութիւն կայ բարձրելու Ռուսաս- տանի նաւահանգիստները:

Այս տարվայ զեկտեմբեր ամսին տեղի կու- նենայ, մայրաքաղաքի լրագիրների ասելով, անապայագործութեան համառոտական ցուցա- հանդէսը:

Ներքին գործերի միջիստրութիւնը որոշել է շատ քաղաքներում սովորական քաղաքային ինքնավարութիւնը փոխարինել կրճատ ձեւի ինքնավարութեամբ:

Լեւ Տօրտոյի «Թատրիւն» վէպը պ. Գէ փոխադրել է բնմի համար: Պէտքը անուանվում է «Կատիւ Մարգարէ», վէպի հերոսուհու ա- նունով:

ԿԱԶԱՆՍԿԻ մեզ գրում են. «Մեզ մօտ հիւր է յայտնի հայ երգչուհի տիկին Տէրեան-Լորդեան- նան, որ, առաջին անգամ գուր գալով «Ար- դա» օպերայում, մեծ աջողութեամբ երգեց եւ, ինչպէս գրում է «Казанский Телеграф» լրա- գիրը, 10-ը տարի կը լինի, որ կազանի թատ- րօնը չէ տեսել այսպիսի աջող «Արդա»:

ԹԱԻԻԻԶԻՑ մեզ հեռագրում են. «Սեդրա- կեան արեւելահայերը միաձայն ընտրվեց ա- ռաջնորդ»:

ՂԱԶԱՆԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 8-ին, նոր կիրակի օրը, մեծ հանդիսով օձվեց Ղազա- րի նորակառուց հայոց եկեղեցին: Օձման կար- թի կառարարը Գառնիկի փոխարդ Անանիա եպիսկոպոսը տաք քահանաներով: Այդ եկեղե- ցին սկսել է իր ծախսով կառուցանել Բանանց գիւղից պատեղ վերաբնակված Մակի Ջաղէ- թեանց եւ աւարտել է նրա որդին: Եկեղեցու օձումից յետոյ, պ. Աղէքսանդր Ջաղէթեանը քաղաքային այգում պարտասուղ էր ձոխ սե- ջան, ուր ժողովուրդը առատօրէն հիւրասիր- վեց»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Բերլինից հեռագրում են «Рыс. Вѣд.» լրա- գրին. «Մայիսի 1-ի տօնը անցաւ Բերլինում եւ ամբողջ Գերմանիայում ամենամեծ կարգով: Ոչ մի տեղ խաղաղութեան ամենափոքր խան- դարում անգամ տեղի չունեցաւ: Կէսօրից յետոյ արհեստաւորական միութիւնները կազ- մեցին ժողովներ, որոնց ժամանակ խօսվեցին ճանաչ մայիսի 1-ի օրվայ նշանակութեան մա- սին եւ յայտնվեցին ութ ժամվայ աշխատանքի եւ ընդհանուր խաղաղութեան պահանջներ: Երկրորդ տեղի ունեցան բազմաթիւ ընտա- նեկան հանդէսներ, պարեր եւ երաժշտական ներկայացումներ: Ծառախօսները մէջ էր նաեւ Գերմանիա նոր վերադարձած էգուարդ Բէ- րէնշտէյն: Վիէնայից նոյնպէս հաղորդում են, որ չը նախելով ժողովրդի ահաբեկ համախմբ- ման, մայիսի տօնը անցաւ լիակատար կարգ ու կանօնով:

— Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ լրտեսներն զորքի ջնհութիւնը բաց է անում նոր-նոր եւ անպատկեր փաստեր: Լրտեսների մի խումբ, ըստ Երեւոյթին, յարա- բերութիւններ ունէր ոչ միայն Կրեպի, այլ եւ զանազան օտարերկրեայ օֆիցերներին, գերմա- նացիներին, աստորիացիներին, իտալացիներին եւ մինչեւ անգամ ռուսներին հետ: Միջնորդի զե- ր խաղում էր, ասում են, պարիզից մի անգամ, որ շատ ծանօթութիւններ եւ կապեր ունի կօստալիտական աշխարհում: Ասում են նոյն- պէս, թէ մեղադրվածները փորձեր են արել կապեր հաստատելու Մօնիլսօնի արհեստանոց- ների ընտելութեան հետ՝ նպատակ ունենալով ձեռք բերել այն նոր արագածից թնդանօթների նկարները, որոնք չինվում են այդ արհեստանոց- ներում: Այս հանդամանքը ստիպում է ենթա- դրելու, որ այդ լրտեսները եղել են ոչ միայն Կրեպիի գործակալները, այլ եւ խառն են եղել մի ուրիշ լրտեսական գործի, որ աւելի նշանաւոր է քան առաջինը: Դատաստանական իշխանութիւնների գրաւած թղթերից երեւում է, որ լրտեսութեան գործին մասնակցում են շատ աւելի լաւ տեղեկութիւններ ունեցող ան- ձինք, քան սկզբում մեղադրվածները:

— «Ostas. Lloyd» արտասպել է «New Presse» լրագրից, որի հրատարակիչը անցնող ձմեռ մի քանի ամիս անց է կայրել Պեկինում, Տեան- ձինում եւ չինական ուրիշ քաղաքներում, մի յօդուած՝ «Բարաբարական վրիժառութիւն Չի- նաստանում» վերնագրով: «Դեռ ոչ մի ժամա- նակ, ասում է յօդուածի հեղինակը,— լոյս աշխարհ չէին դուրս եկել արեւմտեան քաղա- քակութեան համար աւելի ամօթաբեր ա- րարներ, քան այն բոլոր անգլիկութիւնները եւ զարհուրանքները, որ գործեցին եւ զեռ չարու- նակում են գործել Չինաստանում զանաակից զորքերը: Այս փաստըրը այնպէս լաւ ստուգ- ված են, որ ոչ մի հերքում չէ կարող տեղի ունենալ: Չին-հապոնական պատերազմի ժա- մանակ ամբողջ աշխարհը զարհուրում էր, երբ հաղորդվում էր, թէ եւսապայիցները կոտորում են իրանց զերիներին: Եւսապայիցների արարքները համարվում էին ապացոյց այն բանի, որ եւսապ- նական ժողովուրդը մնում է զեռ եւս կիսապայ- րենի դրութեան մէջ: Բայց եւսապայիցները երբեք չեն կատարել ընդհանուր կոտորածներ, չեն սպանել հիւսիսային Չինաստանում անխոր- տաւարական, կանանց եւ երեխաների նրբէք- պատերազմի ժամանակ տեղի չեն ունեցել: Կիսի գործեր, որոնք կատարվեցին Տեանձինը գրաւելու, դրանք ուղղակի միջնորդութեան կօ- ղովումներ էին: Արշաւանքը դէպի Պեկին թողեց իր ետեւից աւերածները ամենախալ- տառակ հետք: Ուղղվող ընակիչները կոտոր- վում էին առանց որ եւ պատճառի Պատե- րազմի բոլոր մասնակիցներն եւս միակերպ առիթներ էին տալիս արդար զանազանների նրանց զարհուրել անգլիկութիւններից: Չինաս- տանի համար ամենաուրախական առարկաների յափշտակութիւնը զգուհեք եւ ցաւ է յարու- ցանում»:

— Անգլիական լրագիրները վերջին ժամա- նակ նորից սկսեցին խօսել Կրեպէրի ծրագրի մասին՝ ճանապարհորդելու Ամերիկայում այս ամառվայ ընթացքում: Լրագիրները զանազան տեսակ ենթադրութիւններ են անում այդ ճա- պարհորդութեան նպատակի վերաբերմամբ: Սա- կայ մինչեւ այժմ ոչինչ ճշտութեամբ յայտնի չէ ոչ այդ ճանապարհորդութեան նպատակի եւ ոչ այն պայմանների մասին, որոնց մէջ կը կատար- վի ճանապարհորդութիւնը: Հաւատացնում են, որ Կրեպէր կը կարգայ մի շարք դասախօսու- թիւններ նրա համար, որ հետաքրքրութիւն զարթեցնէ ամերիկացիներին մէջ դէպի բօէր- ները եւ համարութիւն՝ դէպի նրանց պալ- քարը: Անգլիական լրագիրները անողութիւն- չեն դուշակում Կրեպէրի առաջիկայ ձեռնար- կութեանը: Պատերազմի սկզբում,— ասում են նրանք,— բօէրները արդէն փորձեցին այդ մի- ջոցով աղղիլ ամերիկացիներին վրա, եւ հարաւ- աֆրիկական դեպատութեան անդամներին, ո- րոնք այդ նպատակով ուղարկված էին Միա- յեալ-Նաւանդները, ինչպէս յայտնի է, ոչնչոր- ված ընդունկութիւն ցոյց առին այնպիսի Ամերիկայում նրանց ջերմ համարական ցոյ- ցեր արին եւ շատ միջերկրական խոստում- ներ տուին, բայց եւ այնպէս Միաեալ-Նա- հանդները չը միջամտեցին Անգլիայի եւ հա- րաւ-աֆրիկական հանրապետութիւնների կու- լի

մէջ եւ մինչեւ անգամ կամաւորներն ոչ մի զօ- րաբաժին չուղարկեցին բօէրներին օգնելու: Հաւանական է,— ասում է «Morning Post»,— որ Կրեպէրին եւս չի վիճակվի աւելի մեծ աջողութիւն գտնել, քան այն աջողութիւնը, որ գտան Վէսիյա եւ Վոյմօրինգ: Կար, յիշաւի, մի րօպէ, երբ Միաեալ-Նահանդները ճշմարիտ որ պատրաստ էին միջամտելու, բայց այդ րօ- պէն անդարձ անցաւ եւ բօէրները չը կարո- ղացան օգուտ քաղել նրանից: Այժմ արդէն ուշ է եւ անօգուտ՝ յոյս դնել Միաեալ-Նա- հանդների օգնութեան վրա: Ամերիկայի ժողո- վուրդը հիմա կասէ Կրեպէրին, թէ նա հիա- ցած է նրա ժողովրդի քաջութեան վրա, բայց թէ ներկայ պայմանները չեն թող տալիս նրան արգելելու Անգլիային վերջանել այն, ինչ որ Կրեպէր եւ բօէրները անուանում են ռճրա- զործութիւն:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

21 ապրիլի

ԿԱԿՈՒՍՏԱ: Փենսիլանի, այն չըջանի գիւ- ղերում, ուր ժանտախտ կայ, ազգաբնակու- թիւնը շատ քանակաւ է: Քանզի գիւղեր միտեղ սիստեմատիքական դիմադրութիւն են ցոյց տալիս իշխանութիւնների կողմից ձեռ- նարկած միջոցներին: Մի գիւղում սպանված է տեղացի օֆիցէրը. աստիտարական խումբը ենթարկվել է լուրջ յարձակման: Այնտեղ զօր- քեր են ուղարկված:

ԿԻՄԲԵՐԼԷՑ: Ալմադի հանքերի փոքրաթիւ զորաբաժին հեծեալները գերի առնվեցին բօէր- ներից Կրաքօի մօտ: Զօրաբաժինը քաջու- թեամբ պաշտպանվում էր. նա անձնատուր ե- դաւ այն ժամանակ, երբ կորցրեց բոլոր ձիերը եւ երբ զօրապետը վիրաւորվեց: Յետոյ նրանց աղաւթը գնդապետ Սկօբլով:

ԼՈՒՐՈՆ: Վախիգտօնից հաղորդում են, որ Կրեպէրին սպասում են Ամերիկայում օգոս- տոս ամսին: Արտաքին գործերի միջիստրու- թիւնը յայտնեց, որ ուրախ կը լինի Կրեպէրի գալու, բայց պաշտօնապէս նրան չի ընդունի:

«Times»-ի թղթակիցը հաղորդում է Պրե- տորիայից, թէ Բօտայի հետ բանակցութիւն- ները վերսկսելու լուրերը ծագեցին նրանից, որ Բօտայի կիւր թղթութիւնն ստացաւ այ- ցեկելու ամուսնուն: Թղթակիցը իրազօրու- թիւն ունի յայտնելու, որ այդ լուրը ճիշդ չէ:

Կիպչենէր հեռագրում է Պրետորիայից, թէ բրիտանական զօրքերը սպանեցին էլի 10 եւ գերի առան 93 բօէրներ: Կամաւ անձնատուր եղան 13 հոգի: Աւար են առնված 286,000 կա- պոց փամբուշտներ, 100 սայլեր եւ 2,070 ձիեր:

ԲԵՐԼԻՆ: Ուշոր հողատէր, պատգամաւոր Միլլէրին առեւտրի միջիստր նշանակելու լուրը հաստատ է համարվում:

22 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: «Русский Инвалид» ում երեւոյց մանրամասն հաղորդագրութիւն ու- սական զօրաբաժինների գործողութիւնների մասին Մանչուրիայում մինչեւ վերջին օրերը: Հիւսիսային մանչուրական զօրաբաժինները, գեներալ Յերեպիլկով հրամանատարութեամբ, ունենցին ընդամենը 20 ընդհարումներ: Ռու- սաց կորուստները գործողութիւնների ամբողջ ընթացքում եղել են հետեւեալները.— վրէժերից մնան երկու օֆիցէր—կապիտան Արազա եւ պօզպօրուշիկ Օրլով. սպանված են 24 զի- նուորներ եւ մէկը մեռել է վրէժերից: Վիրաւոր- ված են 7 օֆիցէրներ եւ 61 զինուորներ: Մեր տարած յաղթութիւնների մրցանակները՝ Կրուպ- պի մի թնդանօթ, ուրիշ զանազանատեսակ թնդանօթներ եւ զէնքեր, որոնք մեծ մասամբ ոչնչացրած են: Գերի է առնված ֆուդուտուն Շէու եւ նրա օգնական Միշկովանա-Չին: Վերջի վերջոյ այն երեք զօրախմբերը, որոնք սպանում էին խաղաղութեանը այս տարվայ սկզբում, երկուսը բոլորովին ցրված եւ ոչնչաց- րած են, իսկ երրորդը, շատ անաջողութիւն- ներ կրելուց յետոյ, հալածվում է մեր զօրքե- րից: Ապրիլի 20-ին ստացված է Կվանտունի չըջանի զօրքերի հրամանատարի օգնական գե- ներալ Վօլկովից հետեւեալ հեռագիրը, 1901 թիւ ապրիլի 7-ից. «Պրեպայետ Գրեպչեով Միլլէրինցու մօտ ջարդեց չինական մի զօրա- բաժին, բազկացած մօտ 4000 հոգուց. չինա- ցիները փախան դէպի հիւսիս-արեւմուտք. մե- զանից սպանված են երկու եւ վիրաւորված են եօթ զինուորներ: Փոխ-գնդապետ Սօկօլովը զօրաբաժինը, որ դուրս էր եկել Մուկդէնից մարտի 31-ին, միացաւ Գրեպչեովին ապրիլի 3-ին: Գեներալ Կոնդրատովիչ հաղորդում է, թէ մարտի 30-ին նրա զօրաբաժին առաջա- պահ մասերը հասան չինական զօրախմբերին

Չէնգիից դէպի արեւելք, ցրվեցին նրանց եւ գերի առան մօտ 100 մարդ, մեզանից վիրա-ւորված է մի իզապի:

ՎԻԵՆԱ: Սերբական դեպաւն Ուրիստիչ լայտնում է «Neue Freie Presse» լրագրում, թէ «Times»-ի հաղորդած տեղեկութիւնը սերբ- առական զինուորական զանակցութեան մա- սին մի փոփոխութիւն առաւապել է, որ գուրկ է որ եւ է հիմքից:

ԱՄՍՏԵՐԴԱՄ. «Handelsblatt» հերքում է Կրեպէրի առաջիկայ ճանապարհորդութեան լուրերը գէպի Բրիտանիա եւ Ամերիկա:

ՍԵՆՈՒ: Կրօնական կառավարութիւնը նորից առաջարկեց Բրաունին հրաժարվել մաքսատնե- րի դիւրեկտօրի պաշտօնից: Բրիտանական ներ- կայացուցիչը բողոքում է:

ԻՕԿՉԱՄԱ: Ըստ երեւոյթին, միջիստրու- թեան բոլոր անդամները հրաժարական տուին, բայց Ֆինանսների միջիստրից: Նոր միջիստ- րութեան գլուխ նշանակված է մարկիզ Սաիուի:

ԲԵՐԼԻՆ: «Norddeutsche Allgemeine Zeitung» հերքում է այն տեղեկութիւնները, թէ Գերմա- նիան մտադիր է պահանջել Չինաստանից, որ նա վճարէ Ցզեան-Չօտուն ամրացնելուց եւ այլ աշխատանքներից առաջացած ծախքերի հա- տուցումը: «Գերմանիան,— ասում է լրագիրը,— կամենում է միայն ծածկել իր ծախքերը, որ արել է Չինաստանում ծագած անկարգութիւն- ները ճնշելու համար: Չինաստանը մասնակից կը լինի միւս ծախքերի հատուցմանը միայն ո- րոշ տոկոսի չափով»:

23 ապրիլի

ՆՕՎՈԶԵՐԿԱՍԿ: Հայահատիկների եւ խո- տերի գրութիւնը ամեն տեղ լաւ է. անձրեւ- ներ եկան. երկրագործները լիայոյս սպասում են լաւ բերքի:

ԻՕՆԱՆԵՍԲՈՒՐԳ: Մայիսի սկզբից բօէր- ները ժողովվում են Գարաբէլեւստօնէյնի շուրջը, ուր մօտ չորս-հինգ հազար հոգի կան Դէլաբէյի հրամանատարութեան տակ: Բօէր- ները զօրեղ զիջել են գրաւել բլուրների վրա: Բարեկազմ բոլորովին մօտեցել է բօէրներին, բայց նրա ոյժերը այնքան փոքր են, որ նա չէ կարող յարձակում գործել թշնամիների վը- րա: Ռուսի օժանդակ զօրքեր են ուղարկված նրան: Մէտուէն եւ Բոուլիստօն գեներալները մօտենում են Գարաբէլեւստօնէյնին: Ըստ ե- րեւոյթին, ճակատամարտ է տեղի ունենալու: Կարծվում է, թէ բօէրները չեն կարող պահել իրանց չիքը, որովհետեւ թնդանօթներ չունեն: ԻՕԿՉԱՄԱ: Սէուլից ստացված տեղեկու- թիւնները համաձայն, այնտեղ հրատարակված են նոր փոխառութեան պայմանները: Ինձա- նում այդ փոխառութիւնը բաց թողնելու հա- մար կազմված օրինակատու փոխառութեան տաներորդ մասը պահում է իր համար, որպէս զի բանկ հիմնել, իսկ կառավա- րութիւնը պարտավորվում է 24 տարվայ մէջ հինգ միլիօն իւն վերադարձնել: Մաքսերը տրված են իբր երաշխաւորութիւն փոխառու- թեան:

Եւսապայում միջիստրական տաքնապը շա- րունակվում է:

ՏԵՆԵՐԻ: Դեպաւններն ու գեներալները համաձայնութեան եկան Պէլիսո գետի նաւա- գնացութեան բարեօրոշման համար ընտրելիք յանձնաժողովի կազմի վերաբերմամբ: Հիւսիս- տոսական մարմինը, ժամանակաւոր կառավա- րութիւնը եւ մաքսատների վերառեսուչը, մի-մի անգամ են նշանակում այդ յանձնաժո- ղովի համար: Հիւսիստոսական մարմինի կողմից նշանակված է Հօպկինս, ժամանակաւոր կա- ռավարութեան կողմից՝ ռուս գեներալ Վօզակ, մաքսատների վերառեսուչի կողմից՝ Դէտրիկ:

ՊԵՔԻՆ: Դեպաւնների մեծ մասը եկող շա- բաթ գնում է ամառանոց Արեւմտեան լեռնե- րը: Իրանց պաշտպանութեան համար նրանք տանում են հանները զինուորական պահակա- խմբեր: Ուորհրակցելու եւ ընթացիկ գործեր վարելու համար նրանք մտադիր են գալ Պեկին:

ԼՈՎՈՅԵՆ ատաքելութեան մի միսօնէր յայտնել է, թէ, ինչպէս երեւում է նահանգնե- րից ստացված բոլոր զեկուպտիւններից, երկիրը ողբալի դրութեան մէջ է գտնվում.— կատաղի ատելութիւնը դէպի օտարազգիները եւ սպառ- նալիքները նրանց հասցէին այժմ աւելի սաս- տիկ են, քան զեպանութիւնների պահպանու- թիւնից առաջ, եթէ այժմ զօրքերը հեռանան, այդ մի ազգայնական կը դառնայ բնիկ քրիստո- նեաներին կոտորելու:

ԳԼԱԶԳՈ: Գլազգոյի ցուցահանդէսը լիովին արդարացրեց կազմակերպողների ակնկալու- թիւնները. բացման օրը, ապրիլի 19-ին, ցու- ցահանդէսը այցելեցին 94,000 հոգի:

